



ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱԿՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

«26» մարտի 2018թ.

N17

ք. Ստեփանակերտ

Դատախազների և քննիչների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 28-րդ հոդվածով, 52-րդ հոդվածի 18-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 72-րդ և 73-րդ հոդվածներով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Սահմանել «Դատախազների և քննիչների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու մասին» հրամանը՝ նոր խմբագրությամբ: (Կցվում է)
2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:
3. Ուժը կորցրած ճանաչել ԼՂՀ գլխավոր դատախազի՝ «Դատախազների և քննիչների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 34 առ 23.03.2015թ. հրամանը:
4. Հրամանն ուղարկել ԱՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԱՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին, ԱՀ քաղաքապետախազներին:
5. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական

Ա.Ա.Մոսիյան

Հաստատված է Արցախի
Հանրապետության գլխավոր
դատախազի
2018 թվականի մարտի 26-ի թիվ 17
հրամանով

ԿԱՐԳ ԴԱՏԱԽԱՋՆԵՐԻ ԵՎ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է դատախազի և քննիչի ատեստավորում անցկացնելու (այսուհետ՝ ատեստավորում անցկացնելու) կարգը:
2. Ատեստավորումն անցկացվում է զբաղեցրած պաշտոնին դատախազի և քննիչի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման նպատակով:
3. Ատեստավորումն անցկացնում է Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով):

II. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Արցախի Հանրապետության գլխավոր դատախազության (այսուհետ՝ գլխավոր դատախազություն) կազմակերպա-վերահսկողական, վերլուծության, վիճակագրության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժնի պետը մինչև տվյալ տարվա հոկտեմբերի Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին (այսուհետ՝ գլխավոր դատախազ) հաստատմանն է ներկայացնում հաջորդ տարում հերթական ատեստավորման ենթակա դատախազների և քննիչների ցուցակը:
5. Ատեստավորման անցկացման ժամանակը հայտարարվում է գլխավոր դատախազի հրամանով: Ատեստավորման ենթակա դատախազներն ու քննիչներն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, ծանուցվում են ատեստավորում անցկացնելու ժամանակի մասին՝ նրանցից ստորագրություն վերցնելով:
6. Ատեստավորման օրվանից առնվազն երկու շաբաթ առաջ, դատախազի կամ քննիչի անմիջական ղեկավարը հանձնաժողովի նախագահին է ներկայացնում դատախազի կամ քննիչի գնահատագիրը՝ «Դատախազության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 52-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:
7. Գնահատագիրը պետք է բովանդակի տվյալներ դատախազի կամ քննիչի մասին՝ ծննդյան թիվը, ազգությունը, կրթությունը, Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության դատախազության մարմիններում և զբաղեցրած պաշտոնում աշխատանքային ստաժը, նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում ունեցած խրախուսանքներն ու կարգապահական տույժերը,

նրա գործնական, անձնական հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը պետք է հիմնվի նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակաշրջանում դատախազի կամ քննիչի կողմից՝ իր կատարած աշխատանքների մասին, տարին մեկ անգամ անմիջական ղեկավարին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ վերջինիս եզրակացությունների հիման վրա:

8. Դատախազի կամ քննիչի աշխատանքի գնահատականը, նրա գործնական ու անձնական հատկությունների բնութագրումը պետք է լինեն հստակ, հիմնավոր և օբյեկտիվ: Գնահատագրում նշվում են ինչպես նրա դրական հատկանիշները, այնպես էլ աշխատանքում և վարքագծում թույլ տված խախտումները, թերություններն ու բացթողումները: Անմիջական ղեկավարի կողմից գնահատագրի չափանիշների անտեսումը կամ սահմանված կարգի խախտմամբ գնահատագրի ներկայացնելը համարվում է ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարում:

9. Դատախազը կամ քննիչը ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր գնահատագրին:

10. Դատախազը կամ քննիչը գնահատագրի վերաբերյալ առարկությունը(ները) ներկայացնում է Արցախի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի նախագահին, որը հղված զեկուցագրով կցվում է գնահատագրին:

III. ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

11. Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպական և տեխնիկական ապահովումն իրականացնում է Արցախի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպ-վերահսկողական, վերլուծության, վիճակագրության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժինը և Արցախի Հանրապետության դատախազության աշխատակազմը:

12. Նախքան ատեստավորումը, հանձնաժողովի նախագահը ապահովում է հանձնաժողովի անդամների ներկայությունը, ստուգում է պահանջվող փաստաթղթերի, այդ թվում՝ գնահատագրերի առկայությունը, ինչպես նաև ատեստավորվողների ներկայությունը, որից հետո հայտարարվում է ատեստավորման անցկացման սկիզբը:

13. Դատախազը կամ քննիչը ատեստավորմանը ներկայանում է անձամբ՝ Արցախի Հանրապետության դատախազության աշխատակցի իր վկայականով: Ատեստավորմանն անհարգելի պատճառով չներկայանալը համարվում է ծառայողական պարտականությունների ոչ պատշաճ կատարում և առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

14. Դատախազը կամ քննիչը հանձնաժողովին ներկայանում է՝ հայտնելով իր անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը:

15. Դատախազին և քննիչին արգելվում է մտնել ատեստավորման անցկացման սենյակ՝ իր մոտ ունենալով տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր, կապի միջոցներ կամ այլ տեխնիկական սարքեր:

16. Ատեստավորումն անցկացվում է հարցաշարի, ներկայացվող հարցաթերթիկի /այսուհետ՝ հարցաթերթիկ/ և գործնական առաջադրանքների միջոցով՝ գիտելիքների ստուգման նպատակով:

IV. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

17. Հարցագրույցն սկսվում է ատեստավորվող դատախազի և քննիչի վերաբերյալ փաստաթղթային տվյալների ստուգմամբ:

18. Փաստաթղթային ստուգման ընթացքում վերանայվում են դատախազի կամ քննիչի մասնագիտական ու փաստաթղթային պահանջվող տվյալները, որից հետո հանձնաժողովը քննարկում է դատախազի կամ քննիչի գնահատագիրը, ինչպես նաև նրա գրավոր առարկությունները, եթե այդպիսիք կան: Դատախազի կամ քննիչի անմիջական ղեկավարը կարող է փաստաթղթային ստուգման ժամանակ, հանձնաժողովի հրավերով, մասնակցել դատախազի կամ քննիչի գնահատագրի քննարկմանը:

19. Փաստաթղթային ստուգումն ավարտվում է դատախազին կամ քննիչին՝ հարցագրույցին մասնակցելու թյուտվություն տալու կամ չտալու որոշման կայացմամբ: Հարցագրույցին մասնակցելու թյուտվություն չտալու որոշումը կայացվում է գրավոր՝ համապատասխան հիմնավորումներով:

20. Դատախազին և քննիչին չի թույլատրվում մասնակցել հարցագրույցին, եթե հայտնաբերվել է փաստաթղթային տվյալների անհամապատասխանություն, եթե առկա է զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու փաստ կամ հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը լրիվ չեն:

21. Դատախազին կամ քննիչին վերաբերող փաստաթղթային տվյալների անհամապատասխանության կամ փաստաթղթերի ոչ լրիվության դեպքում, դատախազի կամ քննիչի ատեստավորումը հետաձգվում է մինչև դրա հիմքերի վերանայը, բայց ոչ ավելի, քան մեկ ամիս ժամկետով:

22. Հարցագրույցը դատախազի կամ քննիչի զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված գործառնություններից բխող պարտականությունների իմացության, ինչպես նաև գործնական կարողությունների ստուգումն է՝ հարցաշարի, հարցաթերթիկի և գործնական առաջադրանքի հիման վրա տրված հարցերի միջոցով:

23. Հարցաշարում և հարցաթերթիկում բովանդակված են իրավագիտության համապատասխան ոլորտի առանձին ինստիտուտներ, իրավական ակտերի դրույթներ և այլ հարցեր:

24. Հանձնաժողովի հարցադրումները պետք է ձևակերպվեն հստակ, ատեստավորվողի համար հասկանալի և բովանդակային առումով նպատակաուղղված լինեն հարցաշարում ներառված ինստիտուտների, իրավական ակտերի և այլ հարցերի առանձին դրույթների պարզաբանմանը:

25. Դատախազին կամ քննիչին, բացի հարցաթերթիկում ներառված հարցերից և գործնական առաջադրանքից, հարցեր տրվում են հարցաշարում ներառված, ստորև թվարկված բնագավառներից.

1) Արցախի Հանրապետության Սահմանադրություն,

2) «Դատախազության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենք և Արցախի Հանրապետության դատախազության գործունեության կազմակերպմանն ուղղված իրավական այլ ակտեր:

3) ըստ փաստացի պարտականությունների կատարման բնագավառի՝ Արցախի Հանրապետության դատախազության համակարգի համապատասխան մարմնի լիազորությունների շրջանակը, ինչպես նաև տվյալ բնագավառը կանոնակարգող իրավական ակտեր (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական, քրեական դատավարության, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության օրենսգրքեր և այլն):

26. Դատախազին կամ քննիչին հնարավորություն է ընձեռվում ատեստավորումից առնվազն մեկ ամիս առաջ, բացի հարցաթերթիկից և

գործնական առաջադրանքից, ծանոթանալ հարցաշարին: Հարցաշարը տեղադրվում է Արցախի Հանրապետության դատախազության համացանցային կայքում կամ տպագրվում մամուլում:

27. Հարցազրույցի հարցաշարը, հարցաթերթիկը և գործնական առաջադրանքները կազմում է գլխավոր դատախազության կազմակերպավերահսկողական, վերլուծության, վիճակագրության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժինը և հաստատվում է գլխավոր դատախազի կողմից:

Հարցաշարի, հարցաթերթիկի և գործնական առաջադրանքները կազմմանը կարող են մասնակցել Արցախի Հանրապետության դատախազության համակարգի այլ աշխատակիցներ, հանձնաժողովի անդամները, ինչպես նաև այլ գիտական կամ ուսումնական հաստատություններից հրավիրված մասնագետներ:

28. Հարցաշարը, հարցաթերթիկը փոփոխվում կամ լրացվում են համապատասխան իրավական ակտերում կատարվող փոփոխությունների և լրացումների դեպքում:

29. Յուրաքանչյուր դատախազի կամ քննիչի հարցազրույցն անցկացվում է առանձին:

30. Ատեստավորման ընթացքը արձանագրվում է: Արձանագրության մեջ նշվում է ատեստավորվողին հարցաշարի շրջանակում տրված հարցերի, հարցաթերթիկում ներառված հարցերի և գործնական առաջադրանքների պատասխանների արդյունքում: Ատեստավորումը գնահատվում է բալային կարգով, առավելագույնը՝ 100 բալ, նվազագույնը՝ 40 բալ սանդղակներով: Որակավորման հանձնաժողովն ատեստավորման արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

ա) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ 60-80 բալ,

բ) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ ներառելով դատախազների և քննիչների ծառայողական առաջխաղացման ցուցակում՝ 80-100 բալ,

գ) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով՝ 50-60 բալ,

դ) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով արտահերթ դասային աստիճան շնորհելու մասին՝ 100 բալ,

ե) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով ավելի ցածր պաշտոնի փոխադրելու մասին՝ 40-50 բալ,

զ) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին՝ մինչև 40 բալ: «զ» և «ե» կետերով սահմանված դեպքերում, վերապատրաստման նպատակով, ատեստավորվողին տրվում է լրացուցիչ ժամանակ: Ատեստավորվողն անցնում է վերապատրաստում տվյալ ստորաբաժանման ղեկավարի կողմից կազմված և որակավորման հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված ծրագրի շրջանակում: Վերապատրաստումն ամբողջական ծրագրով ավարտելուց հետո, ստորաբաժանման ղեկավարի միջնորդությամբ և գլխավոր դատախազի համապատասխան հրամանով, անցկացվում է արտահերթ ատեստավորում: Արտահերթ ատեստավորման արդյունքում անբավարար միավորներ հավաքած ատեստավորվողը ենթակա է համակարգից հեռացման: Արձանագրության տակ ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

31. Հարցազրույցի արդյունքում հանձնաժողովն ընդունում է օրենքի 52-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը:

32. Հանձնաժողովի կայացրած որոշումը դատախազին և քննիչին հայտնվում է հանձնաժողովի կողմից՝ ատեստավորման ավարտից հետո:

33. Ատեստավորման արդյունքների հետ չհամաձայնվելու դեպքում, դատախազը և քննիչը կարող են այն բողոքարկել վերադասության կամ դատական կարգով՝ օրենքով սահմանված ժամկետներում:

34. Դատախազի և քննիչի ատեստավորման արդյունքները և հանձնաժողովի ընդունած որոշումները գնահատագրում ներառելուց հետո, եռօրյա ժամկետում, ներկայացվում են գլխավոր դատախազին:

35. Գլխավոր դատախազը սույն կարգի կամ օրենքի խախտում հայտնաբերելու դեպքում՝ կարող է անվավեր ճանաչել ատեստավորման արդյունքները և հայտարարել նոր ատեստավորում անցկացնելու ժամանակի մասին:

36. Հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի աշխատանքների ավարտից հետո, գլխավոր դատախազության կազմակերպա-վերահսկողական, վերլուծության, վիճակագրության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժին է ներկայացնում դատախազի կամ քննիչի ատեստավորման արդյունքում կայացված որոշումները, կազմված արձանագրությունները և մնացած բոլոր փաստաթղթերը՝ դրանք դատախազի կամ քննիչի անձնական գործում պահելու և սահմանված կարգով արխիվացնելու համար:

37. Ատեստավորման արդյունքների հիման վրա, գլխավոր դատախազը համապատասխան որոշում է ընդունում օրենքի 52-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված ժամկետներում:

VI. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹ

38. Օրենքով և սույն կարգով սահմանված դրույթների խախտման դեպքում տվյալ դատախազի կամ քննիչի ատեստավորումը ԱՀ գլխավոր դատախազի կողմից կամ դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր: